ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«03» 04 2026թ.
№ ԿԱՊ2/722

«Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ին /ՀՎՀՀ 01229936/
ՀՀ, ք. Երևան, Ֆուչիկի 27
Էլ. փոստի հասցե՝ garni-ler@mail.ru
Հեռ.՝ 010-34-07-11

ՀՀ պաշտպանության նախարարության և «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ի միջև 27.05.2014թ. կնքված N ԲԸԱՀԱՇՁԲ-13-5 ծածկագրով գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) (փոփոխություններ թիվ 1 առ 04.12.2014թ., թիվ 2 առ 03.08.2015թ., թիվ 3 առ 07.12.2015թ., թիվ 4 առ 20.12.2016թ. և թիվ 5 առ 08.12.2017թ.) շրջանակներում «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ն գիտահետազոտական և փորձակոնստրուկտորական աշխատանքների կատարման պայմանագրով նախատեսված աշխատանքները չի կատարել:

Հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.5 կետի «բ» ենթակետը՝ (կատարողը բազմիցս խախտել է սույն պայմանագրով սահմանված Աշխատանքի կատարման ժամկետները) ՀՀ պաշտպանության նախարարությունը 03.04.2026թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է վերոնշյալ պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ պետական բյուջեի **900005028106** հաշվեհամարին փոխանցել **17 440 050 ՀՀ դրամ**՝ որպես տույժ (Պայմանագրի 6.3 կետի համաձայն) և **116 500 ՀՀ դրամ**՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.5 կետի համաձայն) որը հաշվարկված է մինչև 25.01.2023թ. ներառյալ: Ինչպես նաև Պայմանագրի միակողմանի ամբողջությամբ լուծման արդյունքում ՀՀ պետական բյուջեի **900005570115** հաշվեհամարին անհրաժեշտ է փոխանցել **23 300 000 ՀՀ դրամ**՝ ընկերության կողմից ՀՀ պաշտպանության նախարարության նկատմամբ վերոնշյալ պայմանագրի շրջանակներում առկա չմարված պարտավորությունը (հաշվապահական հաշվառման մեջ ձևակերպված դեբիտորական պարտքը):

Ենթակա է վերադարձման նաև 23.08.2011թ. թիվ 32 ապրանքագրով «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ի կողմից ստացված մեկ պարկ 20 կգ ապրանքատեսակը: Նշված գումարների վճարված

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

լինելը հավաստող փաստաթղթերի բնօրինակները անհրաժեշտ է մինչև 2026թ. ապրիլի 13-ը ներառյալ ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2071 սենյակ:

Հայտնում եմ, որ վերոնշյալ գումարները Ձեր կողմից չվճարելու դեպքում ՀՀ պաշտպանության նախարարությունը կձեռնարկի միջոցներ դրանց գանձելու ուղղությամբ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը:

Տեղեկացնում եմ նաև, որ վերոգրյալի համաձայն «Գառնի-Լեռ» ԳԱՄ ԲԲԸ-ն կընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Հարգանքով՝

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ